թեան մարդոյ քաղցր է, և 'ի ընթեռնելոյ ձերոյ 'ի շարս օրինաց յայտմանէ ես ոչ երկբայիմ զի հաջեսցի կամաց ձերոց զի ոչ միայն ընդունելի ձեզ ընթերցօղաց լինիլ կարէ, այլ նաեւ հաւատամ ես զի գրկել և 'ի մէջ կրծոց սրտից ձերոց պահել կարէք Օրէնս զայս, և որպէս ամենայն անօրէնութիւն ելանելն 'ի բնութենէ մերմէ ծրնանի 'ի տարբերութենէ ժամանակին և 'ի խելագարութեամբ գործոյ մերոյ, և յետ ծնանելոյ անօրէնութեան մէնջ մեր—նա տայ տեղի մեղաց և ընդունելութիւն մեզ զի մտցէ անօրէնութիւն 'ի մէջ մեր և սովորութիւն լինիցի մեզ ընդունիլ անօրէնութիւնք իբրև Օրէնս, այսինքն թէպէտ ամենայն բնութիւն մարդոյ բնականապէս խոստովանի ակն ընդ ական և ատաճն ընդ ատաման արդարութիւն, այլ 'ի տարբերութենէ ժամանակի որում 'ի գոռոզութենէ իմմէ և կամ 'ի ջերմութենէ արենէ բնութեան իմոյ, եթէ գուցէ զի ես խորտակելով ատամս դրացւոյ իմոյ, այնմ ժամանակին դժուարին լինի ընդունիլ իմ տալ վճիռ 'ի վերայ գործոց ձեռաց իմոց զի հատուցանելով ատաճն իմ փոխան ատամոյ խորտակեցելոյ դրացւոյն իմոյ, եթէ 'ի մէջ աշխարհին մի գտցի Օրէն անխախտելի և եթէ գուցէ զի ես զերծից 'ի հատուցմանէ պարտուց մեղաց իմոց ատաճնայարութենէ և միմիայն միով անձամբ զերծանելոյ իմոյ 'ի յօրինացն համանգա-